Ֆիզիկական անձանց Պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմանները /այսուհետ՝ Պայմաններ/ կարգավորում են, «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Բանկ/ և հօգուտ երեխայի /այսուհետ՝ Հաշվետեր/ Պետական աջակցության հաշվի բացման Դիմում-Պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/ ստորագրող ֆիզիկական անձի (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ) /այսուհետ՝ Հաճախորդ/ միջև իրականացվող Պետական աջակցության հաշվի պայմանագրային հարաբերությունները:

1.2. Սույն Պայմանների, «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 06.03.2014թ. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N275-Ն որոշման /այսուհետ՝ Որոշում/ համաձայն Պայմաններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

- **Ծառայություն** - Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայություն,
- **Ծնող -** Հաշվետիրոջ հայրը կամ մայրը, ումից սերված լինելու փաստը որոշված է օրենքով սահմանված կարգով, Հաշվետիրոջ խնամակալը կամ որդեգրողը,
- **Հաշվետեր -** երեխա, ում անվամբ Հաճախորդը Բանկում բացել է Պետական աջակցության հաշիվ՝ Ծառայության կողմից վճարվող Ընտանեկան դրամագլխի գումարների անկանխիկ ստացման նպատակով,
- **Հաճախորդ** - Հաշվետիրոջ օրինական ներկայացուցիչ (Ծնող), ով բնակվում է (հաշվառված է) Հայաստանի Հանրապետության միևնույն բնակության հասցեով և ով ստորագրել է Բանկում Պետական աջակցության հաշվի բացման Դիմում-պայմանագիրը: Ընդ որում, անկախ Բանկում Պետական աջակցության հաշիվը բացած անձից, Ընտանեկան դրամագլուխը տնօրինողի տվյալները տրամադրվում են Բանկին բացառապես Ծառայության կողմից և Հաճախորդը կարող է հանդիսանալ Ընտանեկան դրամագլուխը տնօրինող, եթե Ծառայության կողմից ներկայացված Ընտանեկան դրամագլուխը տնօրինողը և Հաճախորդը միևնույն անձն է,
- **Ընտանեկան դրամագլխի գումար** – Պետական աջակցության հաշվին առկա միջոցներ,
- **Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձ (Տնօրինող)** - Հաշվետիրոջ հետ ՀՀ նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) Ծնող , ով ձեռք է բերել Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք, եթե բնակվում է (հաշվառված է) Հաշվետիրոջ հետ ՀՀ-ում նույն բնակության վայրում և Ծառայություն է ներկայացրել նպաստը նշանակելու մասին դիմում: Տնօրինողի տվյալները տրամադրվում են Բանկին Ծառայության կողմից:

«Հաճախորդ», «Դիմող», «Դուք», «Ձեր» և «Ձեզ» բառերը վերաբերում են Բանկում Պետական աջակցության հաշիվներ բացած և օգտագործող ֆիզիկական անձանց (ներառալ նաև Ընտանեկան դրամագլուխը տնօրինող անձանց):

«ՎՏԲ-Հայաստան Բանկ», «Բանկ», «Մենք», «Մեր» և «Մեզ» բառերը վերաբերում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությանը:

1.3. Սույն Պայմանները կազմվել են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 06.03.2014թ. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N275-Ն որոշման, Ծառայության և Բանկի միջև 12.09.2014թ. կնքված «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման)» պայմանագրի, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

1.4. Սույն Պայմանները հանդիսանում են Բանկի ներքին իրավական փաստաթուղթ, որը Մեր հրապարակային առաջարկն (օֆերտա) է՝ կնքելու Պայմանագիր՝ Մեր կողմից հաստատված Պայմանների և «Ֆիզիկական անձանց Պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման սակագների» (այսուհետ՝ Սակագներ) համաձայն: Սակագները և Պայմանները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

1.5. Պայմանագրի, Պետական աջակցության հաշվով գործառնությունների իրականացման փաստաթղթերի և նմանատիպ այլ փաստաթղթերի տիպային ձևերը սահմանվում են Մեր կողմից միակողմանիորեն և կարող են պարբերաբար փոփոխվել:

1.6. Մենք իրավունք չունենք Պետական աջակցության հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու Ձեր իրավունքները սահմանափակել, բացի օրենքով նախատեսված դեպքերում:

1.7. Մենք իրավունք ունենք առանց Ձեզ նախապես տեղեկացնելու ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան Ծառայությանը, այլ բանկերին և վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին, ինչպես նաև ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին՝ վերջիններիս պահանջով կամ Մեր նախաձեռնությամբ տրամադրել Ձեր վերաբերյալ տեղեկություններ:

1.8. Ձեր կողմից Ձեր Պետական աջակցության հաշվով գործառնություններ կատարելու և/կամ Մեր կողմից մատուցվող այլ ծառայություններ ստանալու կապակցությամբ Մեզ ներկայացվող ցանկացած փաստաթղթի կապակցությամբ հիմնավոր կասկած առաջանալու դեպքում Մենք իրավունք ունենք նշված փաստաթղթերն ուղարկել համապատասխան լիազոր մարմինների փորձաքննությանը վերջիններիս իսկությունը պարզելու նպատակով: Մենք որևէ պատասխանատվություն չենք կրում այդ կապակցությամբ առաջացած ուշացումների հետևանքով Ձեր կրած վնասների համար:

1.9. Ի կատարումն ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ և ՀՀ այլ նորմատիվ և/կամ Մեր ներքին իրավական ակտերի պահանջների Մենք իրավունք ունենք Ձեզանից պահանջել ներկայացնելու Պետական աջակցության հաշվով կատարվող գործարքների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը, իսկ վերջիններս չտրամադրելու դեպքում՝ հրաժարվել Պետական աջակցությանհաշվով գործարքներ կատարելուց:

1.10. Բանկի տեսակետից Պետական աջակցության հաշվով արտասովոր կամ կասկածելի գործառնություններ կատարելու դեպքում Մենք իրավունք ունենք Ձեզանից պահանջել տվյալ գործառնությունները հիմնավորող փաստաթղթեր (հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր և այլն):

1.11. Մենք իրավունք ունենք կասեցնել/դադարեցնել Ձեր հաշվով իրականացվող գործառնությունները, եթե Ձուք Բանկի տեսակետից ողջամիտ ժամկետներում չեք ներկայացնում սույն Պայմանների 1.9 և 1.10 կետերում նշված փաստաթղթերը:

1.12. Դուք պարտավոր եք Բանկ ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները, և/կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված պատճենները, եթե դա պահանջվում է Բանկի կողմից, ընդ որում, Մենք իրավունք ունենք պատճենել դրանք կամ պահել բնօրինակը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

1.13. Դուք պարտավոր եք Բանկ ներկայացնել Պետական աջակցության հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերում կատարված փոփոխությունները և լրացումները՝ դրանց կատարման օրվանից 10 (տասը) օրացույցային օրվա ընթացքում:

1.14. Մենք պատասխանատվություն չենք կրում Ձեր կողմից Պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերի և դրանցում պարունակող տեղեկատվության արժանահավատության և հետագայում կատարված փոփոխությունների համար: Փոփոխությունների մասին Դուք պարտավոր եք հայտնել Բանկին և ներկայացնել փոփոխված փաստաթղթերի բնօրինակները, կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված կրկնօրինակները: Քանի դեռ Դուք փոփոխությունների մասին չեք ներկայացրել պատշաճ փաստաթղթեր, Մենք առաջնորդվում ենք Ձեր՝ նախկինում ներկայացրած և Բանկում առկա փաստաթղթերով: Դուք երաշխավորում եք Բանկին հատուցել այն վնասները (ներառյալ բաց թողնված օգուտը), որոնք պատճառվել են Բանկին Ձեր կողմից ծանուցելու պարտավորության խախտման հետևանքով:
1.15. Մենք իրավունք ունենք պահանջել, որ Ձեր կողմից օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը թարգմանվեն հայերեն, օրենքով սահմանված դեպքերում՝ վավերացվեն նոտարի կողմից, ընդ որում, Մենք չենք հատուցում թարգմանության և վավերացման ծախսերը:
1.16. Պետական աջակցության հաշվի գաղտնիությունն երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ:
1.17. Սույն Պայմանների ուժով Մենք հանդես ենք գալիս որպես Ձեր հարկային գործակալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով, Պայմանագրի ուժով Ձեր ստացած եկամուտներից վճարման ենթակա հարկային և այլ պարտադիր վճարումների գծով:
1.18. Մենք պատասխանատու չենք պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման չնախատեսված ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Ձեր վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:
1.19. Դուք պատասխանատվություն եք կրում հաշվով կատարվող գործարքների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան լինելու, ինչպես նաև հաշիվ բացելու և գործարք կատարելու հիմք հանդիսացած փաստաթղթերի և դրանցում կատարված փոփոխությունների ճշտության համար:
1.20. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
1.21. Սույն Պայմաններով չկարգավորվող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 06.03.2014թ. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N275-Ն որոշմամբ:
1.22. Դուք հավաստում եք և համաձայն եք, որ Պետական աջակցության հաշվի սպասարկման պայմանագիրը կնքվում է մեկ բնօրինակից, որը պահվում է Բանկում: Ձեր առաջին իսկ պահանջի դեպքում Ձեզ կտրամադրվի Պայմանագրի պատճենը՝ վավերացված Բանկի կողմից:
1.23. Մենք պարտավոր ենք ապահովել Ձեզ սպասարկելու կապակցությամբ Մեզ հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության համաձայն Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը: Ձեր, Ձեր հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն Ձեզ և Ձեր օրինական ներկայացուցիչներին, ինչպես նաև այլ անձանց՝ Ձեր համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Պետական աջակցության հաշվի բացման պայմաններ

2.1. Ընտանեկան դրամագլխի գումարը ստանալու և տնօրինելու նպատակով Բանկը Հաճախորդի դիմումի հիման վրա բացում է Հաշվետիրոջ անվամբ հատուկ բանկային հաշիվ՝ Պետական աջակցության հաշիվ:
2.2. Պետական աջակցության հաշիվը բացվում է ՀՀ դրամ արժույթով:
2.3. Պետական աջակցության հաշվի բացումից և Պայմանագրի ստորագրման միևնույն օրը Բանկը Հաճախորդին է տրամադրում Պետական աջակցության հաշվի բացման վերաբերյալ տեղեկանք՝ Ծառայության համապատասխան տարածքային բաժին ներկայացնելու նպատակով: Բանկը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից Ծառայության համապատասխան տարածքային բաժին տեղեկանքի չներկայացման և դրա հետևանքով՝ Ընտանեկան դրամագլխի գումարը Բանկում բացված Պետական աջակցության հաշվին չհաշվեգրելու համար:
2.4. Պետական աջակցության հաշվի բացման համար Դուք պետք է Բանկ ներկայացնեք հետևյալ փաստաթղթերը՝
- Անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակ),
- Հանրային ծառայության համարանիշ /սոցիալական քարտ կամ Հանրային ծառայության համարանիշի/ Սոցիալական քարտի բացակայության մասին տեղեկանք (բնօրինակ),
- Հաշվետիրոջ խնամակալը հանդիսանալու դեպքում՝ խնամակալությունը հավաստող փաստաթուղթ (բնօրինակ),:
- Հաշվետիրոջ ծննդյան վկայական/ անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակ) (այն դեպքում, եթե Դիմողը հանդիսանում է Հաշվետիրոջ հայրը կամ մայրը՝ նաև նախորդ երեխաների ծննդյան վկայական/ անձը հաստատող փաստաթուղթ),
- Հաշվետիրոջ Հանրային ծառայության համարանիշ կամ Հանրային ծառայության համարանիշի բացակայության մասին տեղեկանք (բնօրինակ):

2.5. Պետական աջակցության հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանվում է Մեր կողմից և կարող է պարբերաբար փոփոխվել:
2.6. Մենք իրավունք ունենք մերժել Պետական աջակցության հաշվի բացումը, եթե՝
- Դուք Բանկ չեք ներկայացրել Պետական աջակցության հաշվի բացման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- Ձեր կողմից ներկայացվել են ոչ արժանահավատ տեղեկություններ,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

3. Պետական աջակցության հաշվի սպասարկման և հաշվում առկա դրամական միջոցների տնօրինման պայմաններ

3.1. Պետական աջակցության հաշվին առկա միջոցները (ներառյալ ընտանեկան դրամագլխի գումարը) առանց սահմանափակումների կարող են տնօրինվել Հաշվետիրոջ կողմից՝ վերջինիս 18 տարին լրանալուց հետո:
3.2. Մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը Պետական աջակցության հաշվով սույն պայմաններով և օրենքով սահմանված կարգով Դուք կարող եք կատարել հետևյալ գործողությունները՝
- Հաշվին կանխիկ և անկանխիկ եղանակով մուտքագրել դրամական միջոցներ առանց սահմանափակումների,
- Կատարել միայն անկանխիկ փոխանցումներ սույն պայմանների 3.3. կետերով սահմանված ուղղություններով,
- Ստանալ Պետական աջակցության հաշվի վերաբերյալ քաղվածք:

3.3. Մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը Պետական աջակցության հաշվին առկա միջոցները (ներառյալ ընտանեկան դրամագլխի գումարը) կարող են տնօրինվել Ձեր կողմից միայն հաշվից անկանխիկ փոխանցումներ կատարելու միջոցով բացառապես հետևյալ ուղղություններով՝
1) Հայաստանի Հանրապետությունում բնակարանի, բնակելի տան գնման, կառուցման համար տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկառուն Հաշվետիրոջ ծնողն է (բացառությամբ խնամակալի).

2) Հաշվետիրոջ կամ Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի, Հաշվետիրոջ Ծնողի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ սահմանված ուսումնական հաստատությունում ուսումնառելու ընթացքում ուսման վարձը (նախադպրոցական ուսումնական հաստատության վարձավճարը) վճարելու համար,
3) Հաշվետիրոջ Ծնողին (բացառությամբ խնամակալի) տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն և առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի» իրականացման գրասենյակի պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի եզրակացությունը՝ վարկը նպատակային օգտագործելու վերաբերյալ.
4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1017-Ն որոշմամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այգուտ, Լոռու մարզի Եղեգնուտ, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Իծաքար բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի (այսուհետ՝ գույք) գնման համար, եթե գնորդը Հաշվետիրոջ Ծնողն է՝ բացառությամբ խնամակալի (գումարը գույք վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով).
5) ցանկացած բանկային հաշվի փոխանցելու միջոցով պարբերական կամ միանվագ վճարումներ կատարելով, բայց ոչ ավել, քան ամսական 50000 դրամը:

3.4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թույլտվությամբ, Տնօրինողի դիմումի հիման վրա ընտանեկան դրամագլուխը կարող է ծախսվել Հաշվետիրոջ կողմից , Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամին, Հաշվետիրոջ Ծնողին ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված համավճարը վճարելու համար, եթե դիմելու օրվա դրությամբ Հաշվետերն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված է “0”-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի կազմում և Հաշվետերը, Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամը, Հաշվետիրոջ ծնողը չունեն այդ բժշկական օգնությունը պետական պատվերի կամ բժշկական ապահովագրության շրջանակներում ձեռք բերելու իրավունք: Տվյալ դեպքում Տնօրինողը բանկին է ներկայացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թույլտվությունը:

3.5. Օրենքով սահմանված դեպքերում Պետական աջակցության հաշվին առկա միջոցները (ներառյալ Ընտանեկան դրամագլխի գումարը, հաշվին մուտքագրված միջոցները և հաշվեգրված տոկոսագումարները) կարող են տնօրինվել նաև Հաշվետիրոջ հետ ՀՀ նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) նրա այլ օրինական ներկայացուցչի կողմից:

3.6. Պետական աջակցության հաշվով գործառնությունները Մենք իրականացնում ենք ՀՀ օրենսդրության, Բանկի և Ծառայության միջև կնքված պայմանագրի, Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի և Պայմանների/Սակագների պահանջներին համապատասխան:

3.7. Պետական աջակցության հաշվով գործարքներ կատարելու նպատակով Դուք կարող եք դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ կամ սույն պայմանների 4-րդ գլխով պահանջվող փաստաթղթերը:

3.8. Մենք Ձեր հանձնարարականի հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Պետական աջակցության հաշվից դրամական միջոցների անկանխիկ ելքագրման գործառնություններ իրականացնելու համար ներկայացված պատշաճ փաստաթղթերի հիման վրա Պետական աջակցության հաշվից իրականացնում ենք անկանխիկ փոխանցում ոչ ուշ, քան համապատասխան հանձնարարականի ստացման օրվան հաջորդող բանկային օրը:

3.9. Պետական աջակցության հաշվով գործառնությունների իրականացման ժամկետներն որոշվում են Բանկի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններով, Բանկի կողմից սահմանված այլ փաստաթղթերով կամ իրավական ակտերով:

3.10. Մենք պարտավոր ենք Ձեր հաշվարկադրամարկղային փաստաթղթերում հիմնավորված կասկածներ հայտնաբերելու դեպքում անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ այդ մասին Ձեզ տեղեկացնելով:

3.11. Պետական աջակցության հաշվին/ից դրամական միջոցների մուտքագրումները և/ կամ անկանխիկ փոխանցումներն իրականացվում են մուտքային/ելքային դրամարկղային օրդերների հիման վրա: Ձեր կողմից նշված օրդերների վրա դրված ստորագրությունը հանդիսանում է Պետական աջակցության հաշվով կատարված գործառնության հավաստիացում:

3.12. Դուք Մեզ իրավունք եք տալիս անակցեպտ կարգով դրամական միջոցներ դուրս գրել Ձեր՝ Բանկում վարվող Պետական աջակցության հաշվիցհետևյալ դեպքերում՝

- Բանկի կողմից Ձեր Պետական աջակցության հաշվին սխալմամբ միջոցների մուտքագրման դեպքում,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- սույն Պայմանների 3.13. կետով նախատեսված դեպքերում:

3.13. Ծառայությունից ստացված պահանջագրի հիման վրա Մենք իրավունք ունենք առանց Ձեզ նախապես տեղեկացնելու Պետական աջակցության հաշվով կատարել հետևյալ գործողությունները՝

- դադարեցնել Պետական աջակցության հաշվով գործառնությունների իրականացումը,
- Պետական աջակցության հաշվից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ավել վճարված երեխայի ծննդյան միանվագ նպաստի գումարները, ընդ որում Բանկը պատասխանատվություն չի կրում սխալ վճարված գումարների համար, եթե դրանք հաշվից ելքագրվել են մինչև պահանջագիրն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը:
- փակել Ձեր Պետական աջակցության հաշիվը և պետական աջակցության հաշվին առկա միջոցները փոխանցել այլ պետական աջակցության հաշվի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
- փակել Պետական աջակցության հաշիվը և Պետական աջակցության հաշվին առկա միջոցները վճարել պահանջագրում նշված անձին:

3.14. Դուք իրավունք ունեք Պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած ժամանակ տեղում ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող հաշվարկադրամարկղային գործառնությունների սակագներին և այլ հրապարակային տեղեկատվությանը:

4. Պետական աջակցության հաշվից գումարների անկանխիկ փոխանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր

4.1. Պետական աջակցության հաշվին առկա միջոցները տնօրինելու նպատակով Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձը Հաշվից անկանխիկ փոխանցում իրականացնելու համար պետք է Բանկ ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

4.1.1. Սույն պայմանների 3.3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն փոխանցում կատարելու դեպքում՝

- Տնօրինողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (եթե վարկառուն հանդիսանում է Տնօրինող չհանդիսացող Ծնողը, նաև վերջինիս անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը),
- Եթե վարկը տրված է այլ Բանկի կողմից՝ նաև տվյալ Բանկի կողմից տրամադրված տեղեկանք (առավելագույնը 15 օրացուցային օր վաղեմությամբ), որի մեջ պարտադիր պետք է նշված լինեն հետևյալ տվյալները՝
  1) Վարկառուի ԱԱՀ, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ,

2) Հիփոթեքային վարկի ձեռքբերման նպատակ,
3) Հիփոթեքային վարկի պարտքի գումարը՝ տեղեկանքի տրման օրվա դրությամբ,
4) Հիփոթեքային վարկի պայմանագրի համարը և տրման ամսաթիվը:

4.1.2. Սույն պայմանների 3.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն փոխանցում կատարելու դեպքում՝
- Տնօրինողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,
- Եթե փոխանցումը կատարվում է Հաշվետիրոջ ուսման վարձի համար, ապա Հաշվետիրոջ ծննդյան վկայականը/ անձը հաստատող փաստաթուղթը,
- Եթե փոխանցումը կատարվում է Հաշվետիրոջ հետ նույն վայրում բնակվող երեխայի համար, ապա վերջինիս ծննդյան վկայականը/ անձը հաստատող փաստաթուղթը,
- Հաշիվ-ապրանքագիր ուսումնական հաստատությունից՝ հարկ վճարողի հաշվառման համարի նշմամբ:

4.1.3. Սույն պայմանների 3.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն փոխանցում կատարելու դեպքում՝
- Տնօրինողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (եթե վարկառուն հանդիսանում է Տնօրինող չհանդիսացող Ծնողը, նաև վերջինիս անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը),
- Եթե վարկը տրված է այլ Բանկի կողմից՝ նաև տվյալ Բանկի կողմից տրամադրված տեղեկանք (առավելագույնը 15 օրացուցային օր վաղեմությամբ), որի մեջ պարտադիր պետք է նշված լինեն հետևյալ տվյալները՝
  1) Վարկառուի ԱԱՀ, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ,
  2) Նշում այն մասին, որ վարկը տրամադրված է ՀՀ կառավարության 31.03.2011թ. N 349-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգի» համաձայն,
  3) Պայմանագրի գումարը, վարկի մայր գումարի մնացորդը և հաշվեգրված տոկոսների պարտքի գումարը՝ տեղեկանքի տրման օրվա դրությամբ,
  4) Վարկային պայմանագրի համարը, տրման ամսաթիվը և հաշվեհամարը:

4.1.4. Սույն պայմանների 3.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն փոխանցում կատարելու դեպքում՝
- Տնօրինողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (եթե գնորդը/սեփականատերը հանդիսանում է Տնօրինող չհանդիսացող Ծնողը, նաև վերջինիս անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը),
- Անշարժ գույքի առուվաճառքի՝ նոտարական կարգով վավերացված պայմանագրի բնօրինակը և անշարժ գույքի նկատմամբ Ծնողի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (բնօրինակը):
- Գույքը վաճառողի բանկային հաշվի համարը:

4.1.5. Սույն պայմանների 3.3-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն փոխանցում կատարելու դեպքում՝
- Տնօրինողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,

4.2. Մենք պատասխանատվություն չենք կրում 4.1. կետով նախատեսված գումարների փոխանցման նպատակով Ձեր կողմից կեղծ, անվավեր, իրականությանը չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացնելու համար:

4.3. Սույն Պայմանների 4-րդ կետի 4.1.2ենթակետերի համաձայն փոխանցում կատարելու դեպքում, եթե փոխանցումը կատարվում է Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի կամ Հաշվետիրոջ որևիցե Ծնողի համար, ապա Բանկն իրավունք ունի կատարել փոխանցումը միայն «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N275-Ն որոշմամբ և Ծառայության և Բանկի միջև կնքված «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման)» պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Ծառայության կողմից ստացված թույլտվության հիման վրա:

5. Պետական աջակցության հաշվով քաղվածքների տրամադրման պայմաններ

5.1. Պետական աջակցության հաշվով կատարված գործարքների համար Դուք կարող եք անվճար ստանալ ամսական քաղվածք՝ Ձեր կողմից նախապես ընտրված եղանակով:

5.2. Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են Պետական աջակցության հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում: Հաշվի քաղվածքը Ձեզ է տրամադրվում Բանկի աշխատակցի ստորագրությամբ և դրոշմակնիքով:

5.3. Մենք պարտավոր չենք Ձեզ տրամադրել քաղվածք, եթե հաշվետու ժամանակաշրջանում բացակայում է տվյալ Պետական աջակցության հաշվով շարժ (հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել):

5.4. Ձեր կողմից ստացված քաղվածքի վերաբերյալ հարցեր առաջանալու դեպքում կարող եք այցելել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսային կենտրոն՝ 87-87 հեռախոսահամարով:

6. Պետական աջակցության հաշվից Սակագներով սահմանված միջնորդավճարների գանձման և տոկոսագումարների հաշվեգրման պայմաններ

6.1. Մենք Պետական աջակցության հաշվի բացման և հաշվով գործառնությունների իրականացման համար Ձեզանից գանձում ենք վճար (միջնորդավճար) և/կամ վճարում ենք տոկոսներ՝ համաձայն Պետական աջակցության հաշվի բացման/ հաշվով գործառնությունների իրականացման օրվա դրությամբ Բանկում գործող Սակագների:

6.2. Պետական աջակցության հաշվի մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույքը և վճարման կարգը սահմանվում է տվյալ պահին Բանկում գործող Սակագներով:

6.3. Պետական աջակցության հաշվի օրական փաստացի մնացորդի նկատմամբ, հաջորդ օրացուցային օրը Մենք հաշվեգրում ենք տոկոս՝ Ձեր և Բանկի միջև կնքված Պայմանագրով սահմանված չափով և կարգով: Ընդ որում, Մենք հաշվեգրում ենք տոկոս Պետական աջակցության հաշվին յուրաքանչյուր մուտքագրված գումարի նկատմամբ հաջորդ օրացուցային օրվանից սկսված մինչև Պետական աջակցության հաշվի փակման նախորդ օրացուցային օրը:

6.4. Մենք իրավունք ունենք Պետական աջակցության հաշվի Պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության դեպքում, Պետական աջակցության հաշվին հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքը փոփոխել և սահմանել ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման նոր տոկոսադրույքին համապատասխան տոկոսադրույքով:

6.5. Հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ՀՀ դրամով:

6.6. Մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը Պետական աջակցության հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկված/հաշվեգրված տոկոսները չեն կարող վճարվել Ձեզ կանխիկ կամ անկանխիկ եղանակով, բացառությամբ սույն Պայմանների 3.3. և 3.13. կետերով նախատեսված դեպքերի:

7. Պայմանների և Սակագների փոփոխության կարգը

7.1. Մենք իրավունք ունենք միակողմանիորեն փոփոխել սույն Պայմանները և Սակագները:
7.2. Սույն Պայմանների կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման և դադարեցման վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը կհանգեցնի տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Մենք Ձեզ նոր Պայմանների վերաբերյալ տեղեկացնում ենք, Ձեր կողմից ընտրված տարբերակով՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:
7.3. Բանկի կողմից տեղեկատվությունը համարվում է Ձեզ տրամադրված այն Ձեր փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում Ձեր համար այն հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից, թե Դուք փաստացի երբ եք ստանում այդ տեղեկատվությունը:
Մյուս բոլոր դեպքերում Պայմանագրի դրույթների փոփոխումը կամ լրացումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ, լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով:

8. Հաշվի փակման և Պայմանագրի լուծման կարգը

8.1. Պետական աջակցության հաշվի Պայմանագիրը ցանկացած պահի կարող է լուծվել և հաշիվը փակվել Հաշվետիրոջ 18 տարին լրանալուց հետո:
8.2. Մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը Դուք իրավունք ունեք լուծել Պայմանագիրը և փակել Բանկում բացված Պետական աջակցության հաշիվը հաշվին միջոցների զրոյացվելու դեպքում կամ այլ բանկում բացված Պետական աջակցության հաշվին Դրամագլխի գումարը փոխանցելու նպատակով:
8.3. Մենք իրավունք ունենք սույն Պայմանների 3.13. կետի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում Ծառայությունից ստացված պահանջագրի հիման վրա միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և փակել Պետական աջակցության հաշիվը՝ առանց Ձեզ նախապես տեղեկացնելու:

9.Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում՝ վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Հաճախորդը հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:
Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
Հայտարարություն: Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
Հայտարարություն: Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

10. Ծանուցում

ՀԱՐԳԵԼԻ՝ Հաճախորդ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 6, հեռախոս՝ +374 10 583514, ինտերնետային կայքը՝ www.adgf.am Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:
Հատուցման դեպքը
Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.
- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):
- Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:
Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը
Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:
Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին ավանդի և համատեղ ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային Պետական աջակցությանավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր Պետական աջակցության ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Ձերաշխավորված ավանդ. Ձեր ավանդը երաշխավորված չէ, եթե՝

i. Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
ii. Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
iii. Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
iv. Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
v. Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է Պետական աջակցությանավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ Պետական աջակցությանավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
vi. Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

Ձեր ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ (այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի Պետական աջակցության ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ) □,

չերաշխավորված ավանդ □:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերոնշյալ դրույթները կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 06.03.2014թ. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N275-Ն որոշման պահանջներին:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Ֆիզիկական անձանց Պետական աջակցության հաշվի

1. Պետական աջակցության հաշվի հիմնական պայմաններ

1.1. Ընտանեկան դրամագլխի գումարը ստանալու և տնօրինելու նպատակով Բանկը Հաճախորդի դիմումի հիման վրա բացում է Հաշվետիրոջ (երեխայի) անվամբ հատուկ բանկային հաշիվ՝ Պետական աջակցության հաշիվ:

1.2. Պետական աջակցության հաշիվը բացվում է Հաճախորդի կողմից Պետական աջակցության հաշվի Դիմում - պայմանագրի ստորագրման օրը:

1.3. Պետական աջակցության հաշիվը բացում է ՀՀ դրամով:

1.4. Պետական աջակցության հաշվին առկա միջոցները (ներառյալ ընտանեկան դրագլխի գումարը) առանց սահմանափակումների կարող են տնօրինվել Հաշվետիրոջ կողմից, վերջինիս 18 տարին լրանալուց հետո:

1.5. Մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը Պետական աջակցության հաշվով Հաճախորդը կարող է կատարել հետևյալ գործողությունները՝

- Հաշվին կանխիկ և անկանխիկ եղանակով մուտքագրել դրամական միջոցներ առանց սահմանափակումների,
- Կատարել միայն անկանխիկ փոխանցումներ օրենքով նախատեսված ուղղություններով,
- Ստանալ Պետական աջակցության հաշվի վերաբերյալ քաղվածք:

1.6. Հաճախորդը Պետական աջակցության հաշվի բացման նպատակով Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- Անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակ),
- Հանրային ծառայության համարանիշ /սոցիալական քարտ կամ Հանրային ծառայության համարանիշի/ Սոցիալական քարտի բացակայության մասին տեղեկանք (բնօրինակ),
- Հաշվետիրոջ խնամակալը հանդիսանալու դեպքում՝ խնամակալությունը հավաստող փաստաթուղթ (բնօրինակ),
- Հաշվետիրոջ ծննդյան վկայական/ անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակ) (այն դեպքում, եթե Դիմողը հանդիսանում է Հաշվետիրոջ հայրը կամ մայրը՝ նաև նախորդ երեխաների ծննդյան վկայական/ անձը հաստատող փաստաթուղթ),
- Հաշվետիրոջ Հանրային ծառայության համարանիշ կամ Հանրային ծառայության համարանիշի բացակայության մասին տեղեկանք (բնօրինակ):

1.7. Պետական աջակցության հաշիվը բացվում է Հաճախորդի ներկայությամբ՝ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման դեպքում:

1.8. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել իր հաշիվը և հաշվում առկա դրամական միջոցները տեղափոխել այլ Բանկում բացված Պետական աջակցության հաշվի:

1.9. Բանկը երաշխավորում է Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:Բանկն իրավունք ունի Սոցիալական ապահովության Պետական ծառայության պահանջագրի հիման վրա իրականացնել հետևյալ գործողություններ՝

- պահանջագրի ներկայացման օրվան հաջորդող երրորդ բանկային օրվանից ոչ ուշ փակել Պետական աջակցության հաշիվը և դրանում առկա դրամական միջոցները փոխանցել այլ Պետական աջակցության հաշիվ կամ ՀՀ պետական բյուջե,
- դադարեցնել Պետական աջակցության հաշվով գործառնությունների իրականացումը,
- փակել Պետական աջակցության հաշիվը և Պետական աջակցության հաշվին առկա միջոցները վճարել պահանջագրում նշված անձին:

2. Տեղեկատվություն Պետական աջակցության հաշվի սակագների վերաբերյալ

Ծառայություն	Սակագին (ՀՀ դրամ)
Հաշվի բացում	
Հաշվի բացում	**Անվճար**
Հաշիվների սպասարկում	
Հաշվի տարեկան սպասարկում	**Անվճար**
Նվազագույն մնացորդ	
Նվազագույն մնացորդ	**Չի պահանջվում**
Հաշվի փակում	
Հաշվի փակում	**Անվճար**
Հավելյալ ծառայություններ	
Պետական աջակցությանհաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան պարզ տոկոսադրույք	*ՀՀ ԿԲ վՏ + 0.5%**
Պետական աջակցության հաշվի գրքույկի տրամադրում (ինչպես նաև վերջինիս կորստի կամ թարմացման դեպքում)	300
Տեղեկատվական ծառայություններ	
Առձեռն տրամադրում բանկի տարածքում	
քաղվածքի տրամադրում [1]	
ընթացիկ կամ նախորդ ամսվա համար	Անվճար
2-ից 12 ամիս վաղեմության	1900
1 տարուց ավել վաղեմության	3900
Վճարային փաստաթղթերի պատճեների տրամադրում[1]	
Թղթային տարբերակով պահվող փաստաթղթերի դեպքում[2]	
մինչև 1 տարի վաղեմության	2900
1 տարուց ավել վաղեմությանն	4900
Էլեկտրոնային տարբերակով պահվող փաստաթղթերի դեպքում [2]	1900
Տեղեկանքների տրամադրում Բանկի ստանդարտ տիպային ձևով [1]	
հայերեն լեզվով	2900
ռուսերեն լեզվով	3900
Տեղեկանքների տրամադրում ոչ ստանդարտ ձևով [1]	5900

[1] Ներառյալ ԱԱՀ
[2] Յուրաքանչյուր ձևի համար

* Պետական աջակցության հաշվի Պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի յուրաքանչյուր փոփոխության դեպքում հաշվի տարեկան տոկոսադրույքը սահմանվում է ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման նոր տոկոսադրույքին համապատասխան

3. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ

3.1. ***«Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք»՝ տարեկան կտրվածքով Պետական աջակցության հաշվի պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա Բանկը հաշվարկում է հաճախորդին վճարման ենթակա տոկոսագումարները:***

- Հաշվի տարեկան պարզ տոկոսադրույքի չափ՝

Հաշվի արժույթ	Լողացող տոկոսադրույք
ՀՀ դրամ	ՀՀ ԿԲ ՎՏ + 0.5%

Պետական աջակցության հաշվի պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝ եթե ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տարեկան վերաֆինանսավորման տոկոսադրույքը հավասար է 6%-ի, ապա ՀՀ դրամով Պետական աջակցության հաշվի տարեկան տոկոսադրույքը հավասար է 6.50%-ի, հաշվետերը 366 օրվա դեպքում կստանա.

- (100 000 ՀՀ դրամ) * 6.50% = 6500 ՀՀ դրամ՝ 364 օրվա համար:

3.2. ***Պետական աջակցության հաշվի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝***
«APY-էյ-Փի-Ուայ (այսուհետ՝ APY)»՝ տվյալ հաշվի համար հաշվարկված տարեկան տոկոսային եկամտաբերությունը: APY ցույց է տալիս, թե որքան կկազմի հաշվի տարեկան եկամտաբերությունը հաշվետիրոջ կողմից հաշվի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

APY – տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝ եթե ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տարեկան վերաֆինանսավորման տոկոսադրույքը հավասար է 6%-ի, ապա ՀՀ դրամով Պետական աջակցության հաշվի տարեկան արդյունավետ տոկոսադրույքը հավասար է.

Հաշվի արժույթ	Լողացող տոկոսադրույք
ՀՀ դրամ	6.50 %

- (100 000 ՀՀ դրամ) * 6.50 % = 6 500 ՀՀ դրամ՝ 364 օրվա համար:

3.3. Պետական աջակցության հաշվին առկա դրամական միջոցները կարող են վերադարձվել մինչև երեխայի 18 տարին լրանալը ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, ընդ որում՝

- եթե Պետական աջակցության հաշվի (ներառյալ նաև մուտքագրված դրամական միջոցների)՝ Բանկում փաստացի պահված օրերի քանակը փոքր է 365 /ներառյալ 365-րդ/ օրից, ապա Բանկը կատարում է տոկոսների վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում Բանկային հաշվի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:
- եթե Պետական աջակցության հաշվի (ներառյալ նաև մուտքագրված դրամական միջոցների)՝ Բանկում փաստացի պահված օրերի քանակը մեծ է 366 օրից՝ Բանկը կատարում է տոկոսների հաշվարկ պայմանագրի լուծման պահին Հաճախորդի պայմանագրով սահմանված՝ Պետական աջակցության հաշվի համար գործող տոկոսադրույքով (հաշվի առնելով ՀՀ ԿԲ Վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունները):

3.4. Պետական աջակցության հաշվի պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման դեպքում, Ավանդի տարեկան տոկոսադրույքը ավտոմատ սահմանվում է ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման նոր տոկոսադրույքին համապատասխան:

4. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:
Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
Հայտարարություն: Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
Հայտարարություն: Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

5. Պետական աջակցությանհաշվի գումարը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝

համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:
Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով. և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

6. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հաճախորդին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերոնշյալ դրույթները կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 06.03.2014թ. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N275-Ն որոշման պահանջներին: